Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի շուկան

2018 թվականի երկրորդ կիսամյակում (վերլուծություն)

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի երկրորդ կիսամյակում

(վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 86449 իրավունքների պետական գրանցման գործարքներ:

2009-2018 թվականների երկրորդ կիսամյակի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են գծապատկեր 1.1-1-ում.

գծապատկեր 1.1-1



1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 36.5 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.8 %:

Գծապատկեր 1.1-2-ում և գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի.

գծապատկեր 1.1-2



գծապատկեր 1.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2017թ.երկրորդ կիսամյակ	30830	4851	6303	6005	6008	5404	10337	4532	3621	2159	3145
2018թ.երկրորդ կիսամյակ	31577	4652	7428	7055	5041	6657	11295	4225	3382	1599	3538
2018թ.առաջին կիսամյակ	26938	4229	6507	5684	5524	6305	9373	3530	3346	1502	3072

Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.1-1

	2017 թվականի երկրորդ կիսամյակ	**փոփոխումը**	**2018 թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	**2018 թվականի առաջին կիսամյակ**
Երևան	30830	2.4%	31577	17.2%	26938
Արագածոտն	4851	-4.1%	4652	10.0%	4229
Արարատ	6303	17.8%	7428	14.2%	6507
Արմավիր	6005	17.5%	7055	24.1%	5684
Գեղարքունիք	6008	-16.1%	5041	-8.7%	5524
Լոռի	5404	23.2%	6657	5.6%	6305
Կոտայք	10337	9.3%	11295	20.5%	9373
Շիրակ	4532	-6.8%	4225	19.7%	3530
Սյունիք	3621	-6.6%	3382	1.1%	3346
ՎայոցՁոր	2159	-25.9%	1599	6.5%	1502
Տավուշ	3145	12.5%	3538	15.2%	3072
Հանրապետություն	83195	3.9%	86449	13.7%	76010

2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 13.7 %-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.9 %-ով : Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 17.2 %-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.4 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.4%-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.6%-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 7.7 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ ՝ նվազել 0.5 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.2 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների.

գծապատկեր 1.1-4



գծապատկեր 1.1-5



	Օտարում	Վարձակալություն	Գրավադրում	Ժառանգություն	Օրինականացում	Առաջնային գրանցում	Վերագրանցում
2017թ.երկրորդ կիսամյակ	30569	5507	13578	12376	765	15361	5039
2018թ.երկրորդ կիսամյակ	33877	5244	14583	13832	792	12301	5820
2018թ.առաջին կիսամյակ	29062	4620	12355	12129	704	11518	5622

Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական

համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	**30569**	**10.8%**	**33877**	**16.6%**	**29062**
1ա	Առուվաճառք	**23311**	**6.1%**	**24744**	**18.4%**	**20893**
1բ	Նվիրատվություն	**7157**	**10.9%**	**7940**	**17.3%**	**6771**
1գ	Փոխանակում	**101**	**-14.9%**	**86**	**32.3%**	**65**
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	**1107**	**-17.0%**	**1333**
2	**Վարձակալություն**	**5507**	**-4.8%**	**5244**	**13.5%**	**4620**
3	**Գրավադրում**	**13578**	**7.4%**	**14583**	**18.0%**	**12355**
4	**Ժառանգություն**	**12376**	**11.8%**	**13832**	**14.0%**	**12129**
5	**Օրինականացում**	**765**	**3.5%**	**792**	**12.5%**	**704**
6	**Առաջնային գրանցում**	**15361**	**-19.9%**	**12301**	**6.8%**	**11518**
7	**Պետգր. /վերագրանցում/**	**5039**	**15.5%**	**5820**	**3.5%**	**5622**
	Ընդամենը գործարք	**83195**	**3.9%**	**86449**	**13.7%**	**76010**

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	**Օտարում**	33877	39.2%	12632	40.0%	37.3%	8692	38.9%	25.7%	12553	38.6%	37.1%
1ա	Առուվաճառք	24744	28.6%	9381	29.7%	37.9%	6251	28.0%	25.3%	9112	28.0%	36.8%
1բ	Նվիրատվություն	7940	9.2%	2963	9.4%	37.3%	2150	9.6%	27.1%	2827	8.7%	35.6%
1գ	Փոխանակում	86	0.1%	38	0.1%	44.2%	19	0.1%	22.1%	29	0.1%	33.7%
1դ	Օտարման այլ տեսակ	1107	1.3%	250	0.8%	22.6%	272	1.2%	24.6%	585	1.8%	52.8%
2	**Վարձակալություն**	5244	6.1%	2784	8.8%	53.1%	1309	5.9%	25.0%	1151	3.5%	21.9%
3	**Գրավադրում**	14583	16.9%	7999	25.3%	54.9%	3845	17.2%	26.4%	2739	8.4%	18.8%
4	**Ժառանգություն**	13832	16.0%	3216	10.2%	23.3%	3250	14.6%	23.5%	7366	22.6%	53.3%
5	**Օրինականացում**	792	0.9%	194	0.6%	24.5%	256	1.1%	32.3%	342	1.1%	43.2%
6	**Առաջնային գրանցում**	12301	14.2%	3373	10.7%	27.4%	3574	16.0%	29.1%	5354	16.4%	43.5%
7	**Պետգր. /վերագրանցում/**	5820	6.7%	1379	4.4%	23.7%	1392	6.2%	23.9%	3049	9.4%	52.4%
	Ընդամենը գործարք	86449	100.0%	31577	100.0%	36.5%	22318	100.0%	25.8%	32554	100.0%	37.7%

1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 32.6 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 1.1-6



գծապատկեր 1.1-7



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Հող
2017թ.երկրորդ կիսամյակ	26111	16673	2257	6847	3041	28266
2018թ.երկրորդ կիսամյակ	28204	18804	1952	7361	2780	27348
2018թ.առաջին կիսամյակ	22487	15773	2046	7004	2412	26288

Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	26111	8.0%	28204	25.4%	22487
2	անհատական բնակելի տուն	16673	12.8%	18804	19.2%	15773
3	արտադրական նշ. շին	2257	-13.5%	1952	-4.6%	2046
4	հասարակական նշ. շին.	6847	7.5%	7361	5.1%	7004
5	ավտոտնակ	3041	-8.6%	2780	15.3%	2412
6	հող	28266	-3.2%	27348	4.0%	26288
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	17358	-3.4%	16775	1.7%	16499
	Ընդամենը	83195	3.9%	86449	13.7%	76010

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

աղյուսակ 1.1-5

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	28204	32.6%	19008	60.2%	67.4%	8575	38.4%	30.4%	621	1.9%	2.2%
2	անհատական բնակելի տուն	18804	21.8%	4392	13.9%	23.4%	4895	21.9%	26.0%	9517	29.2%	50.6%
3	արտադրական նշ. շին	1952	2.3%	767	2.4%	39.3%	431	1.9%	22.1%	754	2.3%	38.6%
4	հասարակական նշ. շին.	7361	8.5%	4096	13.0%	55.6%	2315	10.4%	31.4%	950	2.9%	12.9%
5	ավտոտնակ	2780	3.2%	1963	6.2%	70.6%	693	3.1%	24.9%	124	0.4%	4.5%
6	հող	27348	31.6%	1351	4.3%	4.9%	5409	24.2%	19.8%	20588	63.2%	75.3%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	16775	19.4%	135	0.4%	0.8%	2178	9.8%	13.0%	14462	44.4%	86.2%
	Ընդամենը գործարք	86449	100.0%	31577	100.0%	36.5%	22318	100.0%	25.8%	32554	100.0%	37.7%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 20.0%, իսկ ցածրը 0.5 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	**2017 թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	**2018 թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	**2018 թվականի առաջին կիսամյակ**
Դավթաշեն	2199	-38.7%	1348	-0.9%	1360
Էրեբունի	1952	3.5%	2020	9.6%	1843
Աջափնյակ	2612	42.0%	3708	39.5%	2659
Ավան	1301	23.9%	1612	30.8%	1232
Արաբկիր	4799	-4.0%	4608	20.5%	3825
Կենտրոն	6330	-0.4%	6303	14.5%	5505
Մալաթիա-Սեբաստիա	2927	1.4%	2967	9.0%	2723
Քանաքեռ-Զեյթուն	2066	-16.8%	1719	-13.8%	1994
Շենգավիթ	3145	11.5%	3507	26.1%	2782
Նոր-Նորք	3005	9.0%	3274	24.8%	2623
Նորք-Մարաշ	311	16.1%	361	45.6%	248
Նուբարաշեն	183	-18.0%	150	4.2%	144
Երևան	30830	2.4%	31577	17.2%	26938

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.0 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.6 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ:

աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	11828	6.8%	12632	16.1%	10879
1ա	Առուվաճառք	9096	3.1%	9381	14.8%	8174
1բ	Նվիրատվություն	2684	10.4%	2963	24.8%	2375
1գ	Փոխանակում	48	-20.8%	38	65.2%	23
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	250	-18.6%	307
2	**Վարձակալություն**	1933	44.0%	2784	21.8%	2285
3	**Գրավադրում**	7944	0.7%	7999	20.0%	6666
4	**Ժառանգություն**	3146	2.2%	3216	16.7%	2756
5	**Օրինականացում**	218	-11.0%	194	-16.7%	233
6	**Առաջնային գրանցում**	3568	-5.5%	3373	42.0%	2375
7	**Պետգր. /վերագրանցում/**	2193	-37.1%	1379	-20.9%	1744
	Ընդամենը գործարք	30830	2.4%	31577	17.2%	26938

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 60.2 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.4 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 1.2-3



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Հող
2017թ.երկրորդ կիսամյակ	18343	4243	670	3917	2280	1377
2018թ.երկրորդ կիսամյակ	19008	4392	767	4096	1963	1351
2018թ.առաջին կիսամյակ	15463	3728	685	4022	1788	1252

Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.2-3

Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	18343	3.6%	19008	22.9%	15463
2	Անհատական բնակելի տուն	4243	3.5%	4392	17.8%	3728
3	արտադրական նշ. շին	670	14.5%	767	12.0%	685
4	հասարակական նշ. շին.	3917	4.6%	4096	1.8%	4022
5	ավտոտնակ	2280	-13.9%	1963	9.8%	1788
6	հող	1377	-1.9%	1351	7.9%	1252
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	234	-42.3%	135	-16.1%	161
	Ընդամենը	30830	2.4%	31577	17.2%	26938

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.7 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.1 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	18741	13.4%	21245	16.8%	18183
1ա	Առուվաճառք	14215	8.1%	15363	20.8%	12719
1բ	Նվիրատվություն	4473	11.3%	4977	13.2%	4396
1գ	Փոխանակում	53	-9.4%	48	14.3%	42
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	857	-16.5%	1026
2	**Վարձակալություն**	3574	-31.2%	2460	5.4%	2335
3	**Գրավադրում**	5634	16.9%	6584	15.7%	5689
4	**Ժառանգություն**	9230	15.0%	10616	13.3%	9373
5	**Օրինականացում**	547	9.3%	598	27.0%	471
6	**Առաջնային գրանցում**	11793	-24.3%	8928	-2.4%	9143
7	**Պետգր. /վերագրանցում/**	2846	56.0%	4441	14.5%	3878
	Ընդամենը գործարք	52365	4.8%	54872	11.8%	49072

1.3.2 Մարզերում 2018 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 47.4 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.5 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 1.3-4



Աղյուսակ1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	7768	18.4%	9196	30.9%	7024
2	անհատական բնակելի տուն	12430	15.9%	14412	19.7%	12045
3	արտադրական նշ. շին	1587	-25.3%	1185	-12.9%	1361
4	հասարակական նշ. շին.	2930	11.4%	3265	9.5%	2982
5	ավտոտնակ	761	7.4%	817	30.9%	624
6	հող	26889	-3.3%	25997	3.8%	25036
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	17124	-2.8%	16640	1.8%	16338
	Ընդամենը	52365	4.8%	54872	11.8%	49072

2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 33877 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 39.2%-ը:

2009-2018 թվականների երկրորդ կիսամյակի անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են գծապատկեր 2.1-1-ում.

գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 37.3 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.5 %:

Գծապատկեր 2.1-2-ում և գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.

գծապատկեր 2.1-2



գծապատկեր 2.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2017թ.երկրորդ կիսամյակ	11828	1816	2488	2367	1779	1993	4255	1547	1044	530	922
2018թ.երկրորդ կիսամյակ	12632	1746	3158	2870	1445	2916	4671	1713	1187	496	1043
2018թ.առաջին կիսամյակ	10879	1545	2525	2165	1757	2527	3751	1354	1116	473	970

Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 2.1-1

	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Երևան	11828	6.8%	12632	16.1%	10879
Արագածոտն	1816	-3.9%	1746	13.0%	1545
Արարատ	2488	26.9%	3158	25.1%	2525
Արմավիր	2367	21.3%	2870	32.6%	2165
Գեղարքունիք	1779	-18.8%	1445	-17.8%	1757
Լոռի	1993	46.3%	2916	15.4%	2527
Կոտայք	4255	9.8%	4671	24.5%	3751
Շիրակ	1547	10.7%	1713	26.5%	1354
Սյունիք	1044	13.7%	1187	6.4%	1116
ՎայոցՁոր	530	-6.4%	496	4.9%	473
Տավուշ	922	13.1%	1043	7.5%	970
Հանրապետություն	30569	10.8%	33877	16.6%	29062

2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 16.6 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 10.8 %-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 16.1 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 6.8 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 24.1 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 18.3 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 12.3 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ ՝ 10.2 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.0 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.2 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 2.1-4



գծապատկեր 2.1-5



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Հող
2017թ.երկրորդ կիսամյակ	11476	5202	449	1472	1351	10619
2018թ.երկրորդ կիսամյակ	12878	6067	408	1483	1334	11707
2018թ.առաջին կիսամյակ	10314	4773	374	1468	1225	10908

Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	12878	38.0%	8593	68.0%	66.7%	3993	45.9%	31.0%	292	2.3%	2.3%
2	անհատական բնակելի տուն	6067	17.9%	1513	12.0%	24.9%	1538	17.7%	25.4%	3016	24.0%	49.7%
3	արտադրական նշ. շին.	408	1.2%	119	0.9%	29.2%	90	1.0%	22.1%	199	1.6%	48.8%
4	հասարակական նշ. շին.	1483	4.4%	798	6.3%	53.8%	504	5.8%	34.0%	181	1.4%	12.2%
5	ավտոտնակ	1334	3.9%	939	7.4%	70.4%	343	3.9%	25.7%	52	0.4%	3.9%
6	հող	11707	34.6%	670	5.3%	5.7%	2224	25.6%	19.0%	8813	70.2%	75.3%
6ա	ա/թ գյուղ նշ.հող	6630	19.6%	53	0.4%	0.8%	761	8.8%	11.5%	5816	46.3%	87.7%
	Ընդամենը գործարք	33877	100.0%	12632	100.0%	37.3%	8692	100.0%	25.7%	12553	100.0%	37.1%

Գծապատկեր 2.1-6-ում և աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների.

գծապատկեր 2.1-6

աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	9381	1331	2489	2308	776	2002	3592	1102	783	325	655	15363	24744
Նվիրատվություն	2963	397	640	533	503	470	984	595	351	165	339	4977	7940
Փոխանակում	38	5	4	2	0	2	33	0	0	2	0	48	86
Օտարման այլ տեսակ	250	13	25	27	166	442	62	16	53	4	49	857	1107
Ընդամենը	12632	1746	3158	2870	1445	2916	4671	1713	1187	496	1043	21245	33877

3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 24744 գործարք :

2009-2018 թվականների երկրորդ կիսամյակի անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են գծապատկեր 3.1-1-ում.

գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 37.9 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.3 %:

Գծապատկեր 3.1-2-ում և գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.

գծապատկեր 3.1-2



գծապատկեր 3.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2017թ.երկրորդ կիսամյակ	9096	1406	1958	1783	1297	1565	3390	1076	694	410	636
2018թ.երկրորդ կիսամյակ	9381	1331	2489	2308	776	2002	3592	1102	783	325	655
2018թ.առաջին կիսամյակ	8174	1079	1964	1680	897	1548	2859	931	765	388	608

Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.1-1

	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Երևան	9096	3.1%	9381	14.8%	8174
Արագածոտն	1406	-5.3%	1331	23.4%	1079
Արարատ	1958	27.1%	2489	26.7%	1964
Արմավիր	1783	29.4%	2308	37.4%	1680
Գեղարքունիք	1297	-40.2%	776	-13.5%	897
Լոռի	1565	27.9%	2002	29.3%	1548
Կոտայք	3390	6.0%	3592	25.6%	2859
Շիրակ	1076	2.4%	1102	18.4%	931
Սյունիք	694	12.8%	783	2.4%	765
Վայոց Ձոր	410	-20.7%	325	-16.2%	388
Տավուշ	636	3.0%	655	7.7%	608
Հանրապետություն	23311	6.1%	24744	18.4%	20893

2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.4 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 6.1 %-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 14.8 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.1 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 24.7 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ ՝ 14.5 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.2%-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 4.1 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.9 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 3.1-4



գծապատկեր 3.1-5



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Հող
2017թ.երկրորդ կիսամյակ	8423	3271	305	1177	1235	8900
2018թ.երկրորդ կիսամյակ	9385	3791	317	1120	1148	8983
2018թ.առաջին կիսամյակ	7664	2749	292	1103	1056	8029

Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական

համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ

աղյուսակ 3.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	8423	11.4%	9385	22.5%	7664
2	անհատական բնակելի տուն	3271	15.9%	3791	37.9%	2749
3	արտադրական նշ. շին	305	3.9%	317	8.6%	292
4	հասարակական նշ. շին.	1177	-4.8%	1120	1.5%	1103
5	ավտոտնակ	1235	-7.0%	1148	8.7%	1056
6	հող	8900	0.9%	8983	11.9%	8029
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4966	-4.0%	4769	5.5%	4519
	Ընդամենը	23311	6.1%	24744	18.4%	20893

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակումանշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 20.3 %, իսկ առավել ցածրը՝ 0.4 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Դավթաշեն	567	-20.6%	450	4.7%	430
Էրեբունի	486	21.0%	588	22.8%	479
Աջափնյակ	753	52.7%	1150	34.0%	858
Ավան	444	19.6%	531	23.5%	430
Արաբկիր	1644	-19.6%	1321	7.5%	1229
Կենտրոն	1890	-4.3%	1808	7.1%	1688
Մալաթիա-Սեբաստիա	887	-2.1%	868	8.0%	804
Քանաքեռ-Զեյթուն	521	-6.7%	486	-15.9%	578
Շենգավիթ	824	15.2%	949	23.6%	768
Նոր-Նորք	953	15.7%	1103	33.7%	825
Նորք-Մարաշ	83	3.6%	86	72.0%	50
Նուբարաշեն	44	-6.8%	41	17.1%	35
Երևան	9096	3.1%	9381	14.8%	8174

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 67.7 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	5936	7.0%	6354	18.9%	5346
2	անհատակ անբնակելի տուն	949	3.2%	979	31.2%	746
3	արտադրական նշ. շին	77	26.0%	97	10.2%	88
4	հասարակական նշ. շին.	700	-13.4%	606	-4.6%	635
5	ավտոտնակ	913	-12.6%	798	1.1%	789
6	հող	521	5.0%	547	-4.0%	570
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	50	-16.0%	42	5.0%	40
Ընդամենը		9096	3.1%	9381	14.8%	8174

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.3.1 Մարզերում 2018 թվականի երկրորդ կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 54.9 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.4 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.3-1

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	2487	21.9%	3031	30.8%	2318
2	անհատական բնակելի տուն	2322	21.1%	2812	40.4%	2003
3	արտադրական նշ. շին	228	-3.5%	220	7.8%	204
4	հասարակական նշ. շին.	477	7.8%	514	9.8%	468
5	ավտոտնակ	322	8.7%	350	31.1%	267
6	հող	8379	0.7%	8436	13.1%	7459
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4916	-3.8%	4727	5.5%	4479
Ընդամենը		14215	8.1%	15363	20.8%	12719

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի 3094 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 12.5 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 1027-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 1940-ի դեպքում միայն վաճառող, իսկ 127 առուվաճառքի գործարքի դեպքում երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

գծապատկեր 3.4-1



Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի երկրորդ կիսամյակում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ գծապատկեր 3.4-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 3.4-2



գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	9381	700	60.7%	7.5%	761	36.8%	8.1%
Արագածոտն	1331	43	3.7%	3.2%	71	3.4%	5.3%
Արարատ	2489	39	3.4%	1.6%	275	13.3%	11.0%
Արմավիր	2308	105	9.1%	4.5%	225	10.9%	9.7%
Գեղարքունիք	776	16	1.4%	2.1%	48	2.3%	6.2%
Լոռի	2002	34	2.9%	1.7%	174	8.4%	8.7%
Կոտայք	3592	132	11.4%	3.7%	203	9.8%	5.7%
Շիրակ	1102	43	3.7%	3.9%	100	4.8%	9.1%
Սյունիք	783	13	1.1%	1.7%	77	3.7%	9.8%
Վայոց ձոր	325	3	0.3%	0.9%	42	2.0%	12.9%
Տավուշ	655	26	2.3%	4.0%	91	4.4%	13.9%
Հանրապետություն	24744	1154	100.0%	4.7%	2067	100.0%	8.4%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ.

աղյուսակ 3.4-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Երևան	700	74.1%	402	761	49.5%	509
Արագածոտն	43	2.9 անգամ	15	71	42.0%	50
Արարատ	39	3.0 անգամ	13	275	2.0 անգամ	136
Արմավիր	105	4.4 անգամ	24	225	46.1%	154
Գեղարքունիք	16	33.3%	12	48	-35.1%	74
Լոռի	34	70.0%	20	174	2.2 անգամ	79
Կոտայք	132	2.2 անգամ	61	203	53.8%	132
Շիրակ	43	2.5 անգամ	17	100	37.0%	73
Սյունիք	13	30.0%	10	77	40.0%	55
Վայոց Ձոր	3	-40.0%	5	42	68.0%	25
Տավուշ	26	2.6 անգամ	10	91	65.5%	55
Հանրապետություն	1154	95.9%	589	2067	54.0%	1342

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

աղյուսակ 3.4-3

		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	9385	591	51.2%	6.3%	1051	50.8%	11.2%
2	անհատականբնակելիտուն	3791	199	17.2%	5.2%	407	19.7%	10.7%
3	արտադրական նշ. շին	317	12	1.0%	3.8%	9	0.4%	2.8%
4	հասարակական նշ. շին.	1120	44	3.8%	3.9%	39	1.9%	3.5%
5	ավտոտնակ	1148	79	6.8%	6.9%	51	2.5%	4.4%
6	հող	8983	229	19.8%	2.5%	510	24.7%	5.7%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4769	25	2.2%	0.5%	293	14.2%	6.1%
	Ընդամենը	24744	1154	100.0%	4.7%	2067	100.0%	8.4%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի երկրորդ կիսամյակի նկատմամբ՝ ըստ գույքի տեսակի.

աղյուսակ 3.4-4

	Գույքի տեսակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի առաջին կիսամյակ	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	բնակարան	591	70.3%	347	1051	54.8%	679
2	անհատականբնակելիտուն	199	2.4 անգամ	84	407	64.8%	247
3	արտադրական նշ. շին	12	2.0 անգամ	6	9	0.0%	9
4	հասարակական նշ. շին.	44	33.3%	33	39	85.7%	21
5	ավտոտնակ	79	43.6%	55	51	50.0%	34
6	հող	229	3.6 անգամ	64	510	44.9%	352
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	25	5.0 անգամ	5	293	26.3%	232
Ընդամենը		1154	95.9%	589	2067	54.0%	1342

Աղյուսակ 3.4-5-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ աղյուսակ 3.4-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

աղյուսակ 3.4-5

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ.նշ. շին.	Հասար.նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գրադ.նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	289	108	7	23	30	68	0	525
2	ԱՄՆ	93	25	0	9	18	39	4	184
3	Իրան	53	17	0	5	12	13	0	100
4	Սիրիա	4	1	0	0	6	0	0	11
5	Եվրոպական պետություններ	86	26	2	4	6	19	0	143
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	37	6	1	2	2	3	0	51
7	Այլ պետություններ	29	16	2	1	5	87	21	140
	ԸՆԴԱՄԵՆԸ	591	199	12	44	79	229	25	1154

աղյուսակ 3.4-6

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ.նշ. շին.	Հասար.նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գրադ.նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	812	354	5	30	35	435	263	1671
2	ԱՄՆ	58	12	0	4	3	9	1	86
3	Իրան	41	4	0	3	7	12	2	67
4	Սիրիա	5	0	0	0	2	0	0	7
5	Եվրոպական պետություններ	51	8	0	1	0	11	2	71
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	67	27	0	3	1	33	25	131
7	Այլ պետություններ	17	2	0	2	3	10	0	34
	ԸՆԴԱՄԵՆԸ	1051	407	5	43	51	510	293	2067

Աղյուսակ 3.4-7-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2018 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ՝ ըստ պետությունների և տարածաշրջանների.

աղյուսակ 3.4-7

Պետության անվանումը		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
1	Ռուսաստանի Դաշնություն	525	49.1%	352	1671	49.2%	1120
2	ԱՄՆ	184	3.0 անգամ	62	86	38.7%	62
3	Իրան	100	2.7 անգամ	36	67	3.5 անգամ	19
4	Սիրիա	11	57.1%	7	7	2.3 անգամ	3
5	Եվրոպական պետություններ	143	3.3 անգամ	43	71	73.2%	41
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	51	41.7%	36	131	2.0 անգամ	65
7	Այլ պետություններ	140	2.6 անգամ	53	34	6.3%	32
	ԸՆԴԱՄԵՆԸ	1154	95.9%	589	2067	54.0%	1342

3.5 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.5.1 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 9385 գործարք : 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 22.5 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 11.4%-ով :

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

գծապատկեր 3.5-1



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.5-1

	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Երևան	5936	7.0%	6354	18.9%	5346
Արագածոտն	49	79.6%	88	49.2%	59
Արարատ	221	14.9%	254	40.3%	181
Արմավիր	270	31.1%	354	45.1%	244
Գեղարքունիք	142	19.0%	169	33.1%	127
Լոռի	423	15.8%	490	21.6%	403
Կոտայք	647	24.7%	807	30.0%	621
Շիրակ	378	6.6%	403	18.5%	340
Սյունիք	188	60.6%	302	41.8%	213
Վայոց Ձոր	57	-15.8%	48	-7.7%	52
Տավուշ	112	3.6%	116	48.7%	78
Հանրապետություն	8423	11.4%	9385	22.5%	7664

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 6354 գործարք, 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.9 %-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 7.0 %-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 18.9 %, իսկ առավել ցածրը՝ 0.3 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.5-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Կենտրոն միջին	456000	21.5%	554200	9.9%	504200
Կենտրոն 1գոտի		N/A	665700	5.8%	629000
Կենտրոն 2 գոտի		N/A	498050	4.0%	479100
Կենտրոն 3 գոտի		N/A	448900	3.4%	434000
Կենտրոն 4 գոտի		N/A	N/A	N/A	372500
Կենտրոն 5 գոտի		N/A	352200	4.1%	338400
Արաբկիր միջին	344400	10.3%	379900	5.2%	361150
Արաբկիր 3գոտի		N/A	429100	0.9%	425150
Արաբկիր 4գոտի		N/A	391700	4.5%	374750
Արաբկիր 5գոտի		N/A	350300	5.1%	333450
Արաբկիր 6գոտի		N/A	232400	3.9%	223750
Քանաքեռ-Զեյթուն միջին	267350	5.5%	282100	3.4%	272850
Քանաքեռ-Զեյթուն 4գոտի		N/A	333300	1.5%	328450
Քանաքեռ-Զեյթուն 5գոտի		N/A	320800	1.8%	315000
Քանաքեռ-Զեյթուն 6գոտի		N/A	303400	5.7%	286950
Քանաքեռ-Զեյթուն 7գոտի		N/A	230000	6.1%	216750
Նոր-Նորք միջին	231100	6.3%	245750	2.5%	239800
Նոր-Նորք 6 գոտի		N/A	264800	1.9%	259800
Նոր-Նորք 7 գոտի		N/A	227900	3.6%	220050
Էրեբունի միջին	237000	8.9%	258200	4.3%	247450
Էրեբունի 5 գոտի		N/A	292600	1.2%	289200
Էրեբունի 6 գոտի		N/A	271200	4.3%	260000
Էրեբունի 7 գոտի		N/A	204000	-14.1%	237450
Էրեբունի 8 գոտի		N/A	203400	2.4%	198550
Շենգավիթ միջին	242100	5.5%	255400	1.6%	251300
Շենգավիթ 5 գոտի		N/A	280000	2.2%	273850
Շենգավիթ 6 գոտի		N/A	270850	2.8%	263500
Շենգավիթ 7 գոտի		N/A	239800	1.5%	236150
Շենգավիթ 8 գոտի		N/A	204350	6.0%	192800
Դավթաշեն միջին		N/A	294300	5.4%	279100
Դավթաշեն 7 գոտի		N/A	294300	5.4%	279100
Աջափնյակ միջին	228250	12.6%	256900	4.7%	245300
Աջափնյակ 4 գոտի		N/A	271100	1.3%	267700
Աջափնյակ 6 գոտի		N/A	279100	1.9%	273800
Աջափնյակ 7 գոտի		N/A	234050	4.8%	223250
Աջափնյակ 8 գոտի		N/A	251200	8.9%	230700

Մալաթիա-Սեբաստիամ միջին	232150	4.9%	243500	2.5%	237500
Մալաթիա–Սեբաստիա 6 գոտի		N/A	278000	-3.3%	287500
Մալաթիա–Սեբաստիա 7 գոտի		N/A	241100	2.9%	234300
Մալաթիա–Սեբաստիա 8 գոտի		N/A	212100	7.8%	196800
Ավան միջին	248200	4.7%	259800	2.1%	254550
Ավան 6 գոտի		N/A	N/A	N/A	207200
Ավան 7 գոտի		N/A	259900	0.8%	257850
Նուբարաշեն միջին	157350	7.5%	169100	4.6%	161650
Նուբարաշեն 9		N/A	169100	4.6%	161650

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել են 4.7%-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝աճել 9.9%-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:

*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գուտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

*Ավան համայնքի 7-րդ գուտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

*Աջափնյակ համայնքի 8-րդ գուտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն են թողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարանբնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:

*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.5.3 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3031 բնակարան, ընդ որում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 6.4 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 30.8 %-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազ 17.9 %-ով:

Գծապատկեր 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

գծապատկեր 3.5-3



Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների, վաճառահանված բնակարանների առաջարկվող գների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.

աղյուսակ 3.6-3

Մարզը	Քաղաքը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Արագածոտն	Աշտարակ	111500	0.6%	110850
	Ապարան	84500	1.4%	83300
	Թալին	75850	10.6%	68550
Արարատ	Արտաշատ	104800	5.8%	99050
	Մասիս	106200	6.6%	99600
	Վեդի	93800	1.0%	92900
	Արարատ	82200	-1.3%	83300
Արմավիր	Վաղարշապատ	125900	3.8%	121300
	Արմավիր	93450	3.1%	90600
	Մեծամոր	65100	-2.3%	66600
Գեղարքունիք	Սևան	84250	1.1%	83350
	Գավառ	54450	0.7%	54050
	Մարտունի	123250	4.1%	118400
	Վարդենիս	56600	1.4%	55800
	Ճամբարակ	40500	3.8%	39000

Լոռի	Վանաձոր	79000	1.2%	78100
	Ստեփանավան	67350	-0.2%	67500
	Սպիտակ	95900	5.6%	90800
	Ալավերդի	50500	3.5%	48800
	Տաշիր	59150	4.1%	56800
	Թումանյան	23150	0.4%	23050
	Շամլուղ	28300	0.4%	28200
	Ախթալա	37200	10.1%	33800
Կոտայք	Աբովյան	161600	3.5%	156100
	Նոր Հաճն	128200	2.6%	125000
	Բյուրեղավան	99200	3.0%	96300
	Եղվարդ	121300	4.3%	116250
	Հրազդան	61500	7.5%	57200
	Ծաղկաձոր	285500	1.8%	280400
	Չարենցավան	73400	4.5%	70225
Շիրակ	Գյումրի	89400	-1.1%	90350
	Արթիկ	62500	-6.6%	66950
	Մարալիկ	51600	-0.8%	52025
Սյունիք	Գորիս	136800	3.8%	131850
	Կապան	106400	4.4%	101950
	Սիսիան	83900	3.1%	81400
	Մեղրի	101600	-3.6%	105350
	Քաջարան	103300	3.2%	100100
	Դաստակերտ	21400	-3.6%	22200
Վայոց ձոր	Վայք	86500	-1.0%	87400
	Եղեգնաձոր	121500	1.6%	119600
	Ջերմուկ	107700	-0.1%	107800
Տավուշ	Դիլիջան	112100	5.9%	105850
	Իջևան	116500	1.9%	114300
	Բերդ	95100	-1.5%	96500
	Նոյեմբերյան	60750	11.3%	54600
	Այրում	58900	2.1%	57700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի երկրորդ կիսամյակում մարզերի քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել են 2.4%-ով:

3.6 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2018 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 8983 գործարք : 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 11.9 %-ով, 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ ՝ 0.9 %-ով :

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

գծապատկեր 3.6-1



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի չորրորդ և 2018 թվականի առաջին կիսամյակների նկատմամբ.

աղյուսակ 3.6-1

	2017 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ
Երևան	521	5.0%	547	-4.0%	570
Արագածոտն	1155	-14.8%	984	17.1%	840
Արարատ	1257	23.5%	1553	19.1%	1304
Արմավիր	1093	31.0%	1432	34.5%	1065
Գեղարքունիք	940	-59.0%	385	-26.9%	527
Լոռի	532	76.7%	940	25.5%	749
Կոտայք	2105	-4.1%	2018	22.2%	1652
Շիրակ	394	-15.2%	334	0.0%	334
Սյունիք	270	-4.8%	257	-26.8%	351
ՎայոցՁոր	282	-29.8%	198	-26.1%	268
Տավուշ	351	-4.6%	335	-9.2%	369
Հանրապետություն	8900	0.9%	8983	11.9%	8029

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի երկրորդ կիսամյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 547 գործարք: 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի առաջին կիսամյակի համեմատ նվազել է 4.0 %-ով, իսկ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ աճել 5.0 %-ով:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.6-2



2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Աջափնյակ՝ 19.7 %, իսկ առավել ցածրը՝ 2.4 %՝ Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 547 գործարք՝ 57.31 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 42 միավոր (3.80 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 305 միավոր (23.85 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 179 միավոր (21.61 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 21 միավոր (8.05 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 11.5 %-ը կամ 63 միավոր (2.88 հա) ընդհանուր մակերեսով հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 88.5 %-ը կամ 484 միավոր (54.43 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևանում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարք (0.09 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի:

Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

աղյուսակ 3.6-2

Վարչական շրջաններ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր				գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	10	0.56	0	0.00	0	0.00	0	0.00	56	3.34	22	4.65
Էրեբունի	0	0.00	0	0.00	2	0.04	5	0.26	0	0.00	3	0.60	8	0.29	7	0.42
Աջափնյակ	0	0.00	0	0.00	7	0.43	4	0.04	0	0.00	1	0.22	51	6.99	45	2.36
Ավան	0	0.00	1	0.05	2	0.25	2	0.08	0	0.00	1	0.11	25	1.45	10	0.31
Արաբկիր	0	0.00	0	0.00	2	0.07	0	0.00	0	0.00	3	1.95	19	1.49	4	0.50
Կենտրոն	0	0.00	0	0.00	2	0.03	4	0.36	0	0.00	0	0.00	14	1.03	7	0.68
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.02	39	3.34	2	1.86	34	1.52	22	8.76
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02	0	0.00	1	0.0002	9	2.07	4	0.21
Շենգավիթ	0	0.00	2	0.17	1	0.04	2	0.01	3	0.46	4	3.04	20	0.72	6	1.26
Նոր Նորք	0	0.00	0	0.00	2	0.09	6	0.05	0	0.00	3	0.05	25	2.42	11	0.60
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	1	0.30	1	0.01	0	0.00	0	0.00	3	0.18	8	0.98
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.54	2	0.03
Ընդամենը	0	0.00	3	0.22	29	1.81	31	0.85	42	3.8	18	7.83	276	22.04	148	20.76

Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված է 2018 թվականի երկրորդ կիսամյակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

աղյուսակ 3.6-3
